<<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ, ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա >> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.6 -րդ կետի 9-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը և ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել՝

1) <<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա >>փակ բաժնետիրական ընկերությունում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) <<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա >>փակ բաժնետիրական ընկերությունում ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. <<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա >>փակ բաժնետիրական ընկերությունում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել <<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա >>փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սիրանուշ Ղուկասյանին (հեռախոս՝ 094 95 35 38):

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ

19 հունիսի 2018 թվական
քաղաք Գյումրի

Հավելված N 2
<<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի
անվան թիվ 2 պոլիկլինիկա >>
փակ բաժնետիրական ընկերություն
2018 թվականի հունիսի 19-ի
N 105հրաման

Կ Ա Ր Գ

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ:

3. Ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է Կազմակերպության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձի միջոցով:

4. Վարույթ հարուցելու դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները:

5. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով իրավասու մարմինն իր իրավասության շրջանակներում՝

1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.

2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.

3) ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով.

4) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.

5) անհրաժեշտության դեպքում՝ ազդարարին հնարավորության դեպքում տեղափոխում է այլ աշխատասենյակ.

6) ձեռնարկում է համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ ազդարարին վերականգնում է աշխատանքի, հատուցում նրա կրած վնասները.

7) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ:

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ---------- Սիրանուշ Ղուկասյան

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

Հաղորդման հաշվառման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը	Հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Ազդարարի ստորագրությունը	Գրանցամատյանը վարողի ստորագրությունը	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՏՆՕՐԵՆ ---------- Սիրանուշ Ղուկասյան

Հավելված N 1
<<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի
անվան թիվ 2 պոլիկլինիկա >>
փակ բաժնետիրական ընկերություն
2018 թվականի հունիսի 19-ի
N 105հրաման

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎ

1. <<Գյումրու Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա >>փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ Կազմակերպություն) ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց նշանակում է Կազմակերպության տնօրենը:

2. Կազմակերպությունը հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձի տվյալները տեղադրում է իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվող յուրաքանչյուր անձի համար տեսանելի վայրում:

3. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետներում հաղորդումները պատասխանատու անձի կողմից հաշվառվում են գրանցամատյանում (ձև N 1)՝ համապատասխան գրառման կատարմամբ: Գրանցամատյանում հաշվառվում են նաև այն հաղորդումները, որոնք ներկայացվել են ոչ իրավասու մարմին, և վերջինս այն օրենքով սահմանված կարգով վերահասցեագրել է իրավասու մարմնին:

4. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման հաշվառման հերթական համարը.
2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.
4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.
6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.
7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
8) ազդարարի ստորագրությունը.
9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.
10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:

5. Պատասխանատու անձը համարակալում, ստորագրում, իսկ փաստաթղթային տարբերակով վարման դեպքում՝ նաև կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:

6. Պատասխանատու անձը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը:

7. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

_____ **ՍԻՐԱՆՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ**